

փոփոխութեան չէ ենթարկուել հակառակ հին կարծիքներին, որ խանդարուած էին համարուած Կեչառեցու կողմից, հիմնուելու միայն յիշատակարանի խօսքերի վերայ (\*): Կեչառեցին միայն ընդօրինակել է մի հին ձեռագրից, որ մատչելի չէր և զիւրընթեռնիլ իւր ժամանակակիցներին և տեղ տեղ մտցրել է իւր ոտանաւորները (կաֆաները) բնագրի բովանդակութեան համեմատ, ինչպէս եւ Յառաջաբանն ու Վերջաբանը, որոնց մէջ նա Աղէքսանդրի կեանքի պարագաները նմանեցնում է Յիսուսի կեանքին: Կեչառեցու օրինակով ժ.Չ. դարուած կաֆաներ են գրել այս վէպի հետ կապուած նաեւ Գրիգոր Աղթամարցին եւ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսը. վերջինս ներմուծումներ անելով Կեչառեցու յիշատակարանների մէջ, որոնցից տեղեկանում ենք, որ Սաչատուրն էլ ծագմամբ Պոռչեան տոհմից է, ինչպէս և ինքը (\*\*): Թէև ձեռագիրների մէջ լուսանցքուած «խչ», «խաչ» սղազրութեամբ նշանակուած են նորա կաֆաները, բայց դժուար է ճշգրութեամբ որոշել ի՞նչ նրանն է իսկապէս և ինչ վերագրուած նորան շփոթութեամբ. օրինակ՝ մի քանի տնից բաղկացած հատուածների, թէև կողքին նշանակած է անունը, բայց չենք կարող աւել, թէ ամբողջը նշանակուած անձինն է (\*\*\*):

Ուշագրութեան արժանի երևոյթ է, որ կեղծ կալիսթինեսի Աղէքսանդրի պատմութեան համար առանձին հետաքրքրութիւն են ցոյց տուել մեր միջնադարեան բանաստեղծները Գրիգոր Աղթամարցին, նորա աշակերտ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսը և սրանց ժամանակակից Յովասափ Սեբաստացին. առաջին երկուսը ոչ միայն կաֆաներ են գրել, ինչպէս տեսանք, այլ և նկարագարել են. Յովասափ Սեբաստացին, թէև կաֆաներ չէ գրել, բայց իւր ոտանաւորների մէջ ենթարկուած է հնագոյն կաֆաների ազդեցութեան(\*\*\*\*) և նկարագարել է միւսների նման: Սաչատուր Կեչառեցին սրանց նախահայրն է կաֆաներ գրելու մէջ, բայց ի նկատի ունենալով նորա նկարիչ լինելու իրողութիւնը, անհաւանական չէ, որ լինի նաև առաջին նկարագարողը, եւ այդ աւանդն անցած յետագայ բանաստեղծներին(\*\*\*\*\*):

Սաչատուր Կեչառեցու ոտանաւորների և տաղերի մէջ պատմական բովանդակութիւն և արժէք ունեցողը

(\*) Ալիշան, Այրարատ, 267: Սիսական, 134:

(\*\*) Այդ խնդիրը պարզել են Վիեննայի Մխիթարեան երկու հայրերը՝ Տաշեան իւր վերև յիշուած Ուսումնասիրութեան մէջ (եր. 88) և Ալիշան, Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր տաղերը, Վիեննա, 1910: Մենք ցոյց ենք տուել (Արարատ, 1910, 11), որ երուս. № 473 նախազաքարեան մի օրինակ է 1536 թուին գրուած Մարգարէ գրչի ձեռքով և մի մասը նկարագարուած Գրիգորիս Աղթամարցու կողմից: Յիշատակարանները տ. Յաւել. Գ. 3:

(\*\*\*) Տես Յաւել. Գ. 4:

(\*\*\*\*) Արարատ, 1918, 248 և շար. մեր յղուածը. «Յովասափ Սեբաստացի»:

(\*\*\*\*\*) Խաղբակեանք, Ա., 246/7:

նորա Ողբն է: ԺԳ. դարի վերջերին և ԺԴ. ի սկզբում արդէն զգալի է հայ իշխանութիւնների մանրանալը արեւելեան Հայաստանում, մանաւանդ Թաթարների գէպի մահմեդականութիւն հակուելուց յետոյ. ժամանակակից մտաւորականութիւնը զգում է, որ անցնող դարի ընթացքում ձեռք բերուած քաղաքական համեմատական ապահովութիւնն ու կացութիւնը դէպի վատն է թեքուում. մեռել են բարեկամական շրջանի փառաւոր իշխաններն ու գէմքերը, և ներկայի իշխաններն այլ ևս այն դերը կատարել չեն կարող, ինչպէս իրենց հայրերը (\*): Այս մտայնութեան և զգացմունքի խտացումն է Սաչատուր Կեչառեցու Ողբը, դժբաղդութեան պատճառը համարելով ժողովրդի բարոյական-կրօնական թերութիւնները, դորձած չարիքը միջնադարեան հասկացողութիւնների համեմատ: Հեղինակը սրտառուչ կերպով ողբում է ժամանակի վիճակը, և օգնութիւն խնդրում Աստուծուց.

Ծաղր եւ նախատ բազմաց մեք եղաք  
Յերկաթ եւ ի նեղ զընդան մեք մտաք,  
Յաղքատութիւնս որ ժամանեցաք,  
Այս մեծ դարիս, որ հանդիպեցաք,  
Ի ձեռն չար ազգի զրաւեցաք.  
Բժիշկ չունինք ցաւիս, որ դիպաք,  
Զմեր բարերարն անյայտ կորուսաք,  
Եւ այլ չունինք իսկի մեզ ճարակ.  
Խիստ արժանի էաք զինչ եղեաք,  
Վասն չարեացն որ մեք զործեցաք.  
Աւգնեա՛ մեզ ի նեղութեան մերում, Աստուա՛ծ, աղաչեմք:

Մեռել են այն իշխանները, որոնք Թաթար խաների կամ իշխանների առաջ ազդեցութիւն եւ զիրք ունէին, հերոսների եւ քաջերի անուն. չկայ Սաչուռն աթաբակը (մօտ 25 տարի Հայաստանի աթաբէկն էր) և իւր որդին Սուբլու բուղայ. մեռել են Պոռչը՝ «զարգ հեծելի», որ զերկաթի զուռն առնէր փոշի» և իւր «զարմանալի» որդիքը՝ Մկղէմ, Վասակ, «կորիւնքն առիւծի», պատերազմի մէջ զօրաւոր Ամիր-Հասանը՝ «բազուկն քաջի»: Զկայ Տարսայիճը՝ «զարմն վեհազգի» (Օրբէլեան և Սաղունից յետոյ Հայաստանի աթաբէկը), Մանկու խանի արքունիքում պատիւ

(\*) Նոյն մտայնութիւնը յայտնում է եւ ժամանակակից Մխիթար Այրիվանցին իւր Թարգմանչաց Գանձի մէջ. «Զարթիւր ողորմած, իշխանաց սպառած, ի քար խիղանած» (Զեռ. էջմ. № 75 յփ. 76ա): Գրածորի գրիչներից մէկը՝ Յովհաննէս ժամանակը բնորոշում է դառն և դժնեայ, «յորում տիրէր լուծ այլասեռիցն ի վերա քրիստոնէից...» ևն. (Ալիշան. Սիսական, 133): Օրբէլեան ևս բնորոշում է «յամս կործանման աշխարհիս Հայոց...» (489 եր.) և ի նկատի ունի Նաւրուզի ժամանակ եղած շփոթութիւններն ու աւերմունքը (472/3):